# Ռափայել Պատկանյան

## Գինի և ջուր

Երեկ բժիշկ կանչեցի, գլխիս մեկ դեղ խնդրեցի,
Նա ինձ դեղ տալ չուզելով, ասաց մի՛ խմիր գինի,
Արյունս գլխիս տվեց, բերնումս խոսքս սառեց.
Ասի՝ ի՞նչ է պատճառը, որ ինձ գինին պաս դրվեց.

Բժիշկն ասաց, պատվելի, պատճառն այս է իսկ հայտնի,
Որ միշտ գլուխդ կպտտի, երբ էլ որ խմես գինի.
Ասի՝ բժիշկ, դու սուտ ես, դու լավ մարդ չես, բժիշկ չես,
Գինին ինչպե՞ս է կարող գլուխս շրջել անվի պես.
Այն ջուրն է որ անդադար, շարժման մեջ կա դիվաբար.
Գնա ու տես աղորին, ջո՞ւրն է շարժում, թե գինին:
Եղբայրք, բերեք շուշեքը, լցրեցեք բաժակը,
Խմենք ու առողջանանք, ասենք սուտ է բժիշկը.
Մեզ գինին չի հարբեցնիր, նաև չի հիվանդացնիր,
Խմենք կարմիր նեկտարը, մեզ մարդ հիվանդ չի տեսնիր: